

ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ  
Լրացուցիչ կրթական ծառայության պայմանագիր

2019թ. Բ. Երևան

**Ընդհանուր դրույթներ**

Լրացուցիչ կրթական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) կնքում են ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կրթահամալիր) Հիմնական դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) ..... դասարանի սովորողը ..... (այսուհետ՝ Սովորող), Սովորողի օրինական ներկայացուցիչը ..... (այսուհետ՝ Օրինական ներկայացուցիչ) և Դպրոցի ղեկավարը (այսուհետ՝ Ղեկավար) Գոհար Բայջյան Սովորողին լրացուցիչ կրթական ծառայություն մատուցելու մասին: Պայմանագիրը նախատեսված է Հանրակրթության մասին ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), Կրթահամալիրի զարգացման ծրագրով, կանոնադրությամբ:

**Պայմանագրի առարկան**

Պայմանագրի առարկան սովորողի նախասիրությունները և հետքրքրությունները բավարարելու նպատակով Ծառայության իրականացումն է: Ծառայության բովանդակությունն է (այսուհետ՝ Բովանդակություն):

Երկարացված օրվա (14:00- 17:00) ծրագրի կազմակերպում որպես հանրակրթության լրացում, երկուանգամյա սնունդ, ուսումնական նախագծեր, լրացուցիչ կրթության ծրագրերի կազմակերպում...

**Կողմերի պարտականությունները և իրավունքները**

Սովորողը պարտավոր է.

- մասնակցել Բովանդակությամբ որոշված բոլոր պարամունքներին և չուշանալ դրանցից.
- պարապմունքի ժամանակը այլ նպատակով չօգտագործել.
- անկանխատեսելի բացակայելու կամ ուշանալու դեպքում տեղեկացնել դասավանդողին:

Սովորողն իրավունք ունի.

- մասնակցելու Բովանդակությունը կազմելուն.
- Բովանդակությունում փոփոխություն առաջարկելու:

**Օրինական ներկայացուցիչը պարտավոր է.**

ապահովել Սովորողի մասնակցությունը պարապմունքներին

- Սովորողին ապահովել անհրաժեշտ գործիքներով, պիտույքներով, գրականությամբ, հագուստով
- ժամանակին կատարել պայմանագրով որոշված վճարումները:

**Օրինական ներկայացուցիչը իրավունք ունի.**

- մասնակցելու Բովանդակությունը կազմելուն
- Բովանդակությունում փոփոխություն առաջարկելու
- ժամանակից շուտ լուծելու պայմանագիրը՝ նշելով պատճառները:

**Դասավանդողը (մարզիչը) պարտավոր է.**

- չուշանալ պարապմունքներից
- պարապմունքի ժամանակը այլ նպատակով չօգտագործել
- կատարել սովորողի հաշվառում

- ապահովել Բովանդակության իրականացումը
- Օրինական ներկայացուցչին և Ղեկավարին պարբերաբար տեղեկացնել սովորողի գործունեության մասին

**Պայմանագրի գինը**

1. Ստացած Ծառայության համար Օրինական ներկայացուցիչը պարտավորվում է Կրթահամալիրի հաշվարկային հաշվին տարեկան փոխանցել 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, վճարումները սահմանված կարգով անել փոխանցումով՝ կիսամյակային՝ մինչև սեպտեմբերի 5-ը և մինչև փետրվարի 5-ը, կամ ամսական՝ վճարելով 10 000 (տաս հազար ) ՀՀ դրամ. ամսական վճարման դեպքում վճարումը կատարել մինչև տրված ամսվա 5-ը՝ այն հաշվով, որ առաջին հինգ ամիսների համար վճարումը կատարված լինի մինչև դեկտեմբերի 20-ը, իսկ երկրորդ հինգ ամիսների համար՝ մինչև մայիսի 20-ը:

**Պայմանագրի լուծման հիմքերը**

Պայմանագիրը լուծվում կամ գործողությունը դադարում է սահմանված կարգով.

- 1) Օրինական ներկայացուցչի և Սովորողի նախաձեռնությամբ, երբ դժգոհ են մատուցված Ծառայությունից:
- 2) Ղեկավարի նախաձեռնությամբ՝ երբ Օրինական ներկայացուցիչը կամ սովորողը չի կատարում պայմանագրով որոշված պարտականությունները:
- 3) այլ դեպքերում:

Որևէ հիմքով պայմանագիրը լուծարելու դեպքում արդեն մուծված գումարը չի վերադարձվում:  
Պայմանագիրը գործում է մինչև .....

**Կողմերի ստորագրությունները**

Սովորողի օրինական ներկայացուցիչ՝  
Ղալբոցի ղեկավար

.....  
Գոհար Բալջյան

**Բանկային հաշվի համարը՝ 900018003203**